

ԳԱՐՆԱՆ ԺԱՂԻԿՆԵՐԻՆ

Պողոտիկ, զուարթ ծաղիկներ՝
Գարնան մուտքին չքաղիք
Դուք պճնել էք դաշտ, արօտ,
Առուի ափեր գեղադիր։

Ծածանում էք մարգերում,
Զարդարում լեռ ու բարափ,
Արևից շօղ կորգելով՝
Գիշերից ցօղ ու տարափ։

Փայլում էք համ շուրջ բուրում
Այդքան քնքոյշ ու սիրուն՝
Որ ձեր տեսքին զմայլած
Միրտը՝ սիրով պատարուն

Արհամարհէ վշտերը,
Գրկէ կեանքը շերմագին,
Եւ սիրաշուրթ համբուրին
Զոհէ իւր սիրտն ու հոգին...

Կար ժամանակ որ ես էլ
Գարնան ժպտին սիրահար,
Մնում էի անհամբեր
Ձեր բացուելուն գունավառ.

Պտրում էի դաշտերում
Զիւնածաղիկ, մանիշակ,
Իսկ ծաղկոցում՝ վարդ, քրքում,
Յասմիկ, շուշան ու մեխակ։

Կապում էի նոցանից
Փնշեր բուրեան ու քնքոյշ՝

Եւ խանդավառ, ժպտադէմ
Նուէր տանում սիրուհուս.

Եւ աչերը սէգ կուսին
Պայծառ երկնից համատիպ,
Զեր երփներանգ թերթերին
Նայում էին լուսաբիր:

Ապ՛ ժպտալով ինձ անոյ՛՜
Փունջն հոտոտում քաղցրաբոյր,
Եւ սերտ սիրոյն ի նշան
Տալիս ինձ ջերմ, հուր համբոյր...

Աւանդ, բաղդիս նախանձեց
Զարագուշակ, սև ոգին,
Զերմ սրտի մէջ դրաւ ցուրտ,
Սէրը դարձուց արեան գին:

Ժպլիտ, թէ ջերմ համբոյրներ,
Գգուանք, թէ խանդ գեղանու
Սիրապատար հոգւոյն հետ
Թումն ինձնից, սի, հեռու...

Ինչո՛ւ այլ ևս՝ Փլօրայի
Պսակին զարդ ծաղիկներ,
Բացում էք ու հրապուրում
Արտասոււացօղ իմ աչեր.

Ո՛ւմ համար ես կթեմ ձեզ,
Ո՛ւմ համար փունջ պատրաստեմ,
Իմ դիցուհին էլ չըկայ,
Փակուեց արդէն իմ եղեմ...

Թառամեցէք, սի, դուք էլ,
Կամ խնդրեցէք Աստծուն
Որ աչքերիս վարագոյր՝
Իսկ սրտիս տայ թմրութիւն,
Զը տեսնեմ ձեր վառ պատկեր,
Ոչ էլ զգամ անոյ՜ բոյր...